

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2016 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2016 թվականի առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 45 որոշումներ, 61 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 91 հրամաններ. հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ:

2016 թվականի առաջին կիսամյակում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 3429 և ելք են արվել 4307 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

2016 թվականին ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմերում կիրականացվեն 12 գլխավոր և 9 առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների արեստիպումներ:

Մարզպետարանի աշխատակազմում 2016թ հուլիսի 1-ի դրությամբ թափուր քաղաքացիական ծառայողների հաստիքներ չկան:

Սահմանված կարգով կիրականացվեն աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները, ըստ որի գրաֆիկով նախատեսված տարբեր ժամանակահատվածներում երշաբաթվա մասնագիտական վերապատրաստում են կանցնեն աշխատակազմի թվով 22 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2016 թվականի առաջին կիսամյակում մարզպետի մոտ կատարվել է 884 քաղաքացիների ընդունելություն:

Կիսամյակի ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 26

դիմումներ, որից՝ 2-ը ստացվել են Ջերմուկի, 10-ը Վայքի, 14-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2016թ առաջին կիսամյակում 701 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 38 հաշմանդամներ ստացել են առողջարանային

վերականգնողական ուղեգրեր, իսկ 16-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

2015թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 884 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն	701
2. Նպաստի հարցերով	6
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	7
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	9
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	12
6. Աշխատանքի տեղավորման	17
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	4
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	38
9. Պետ.պատվերով բուժօգնություն	16
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	10
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	10
12. Այլ հարցերով	54

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան